

ՀՐԳԵՋ ՄԵ ԻԹԱՐԵԱՆ ՎԱՆԱՅ

1883 ՏԱՐԻՈՅՆ ՅՈՒԼԻՍԻ 14ԻՆ

(Հատոր ԽԱ. Պրակ Գ. էջ 272)

Է

Ինչ տխուր լուսացաւ կիրակէն. հարիւր եօթանասուն տարիէ 'ի վեր Միսիթարաց տունն այնպիսի տէրունական օր չէր տեսած: Դադարեալ էին սաղմոսերգութիւնք, դադարեալ էին եկեղեցւոյ արարողութիւնք և ամենայն կրօնական շքեղութիւն, և անոր փոխանակ տխուր լուսթիւն մը կը տրիէր միանձնաց վրայ. սաւկայն աստուածային կամաց համակամութիւնն կը զօրացընէր զամէնն:

Պախորդ լուրն ոչ միայն ողջն քաղաքը տաւ բաժնուած էր, այլ և արտաքոյ: Քաղաքացի լըբաղիլք խօսելով Ս. Ղազարու հարուածին վրայ՝ կ'ափսոսային ու կը վկայէին թէ քաղաքացւոց տանախմբութեան ուրախութիւնն 'ի սուգ դարձած էր այն տխուր ձախորդութեան առջին: Քաղաքին իշխանաւորք և մեծամեծք ետեւէ ետեւ կը փութային իրենց ցաւակցութիւնը մատուցանելու, սմանք գրով, այլք բազմապէս անձամբ մենաստանիս դուռը գալով: Քաղաքացւոսն քաղքէս հեռու գտնուելով իւր փոխաւորդն եկաւ մեզի ցաւակցելու, և անոր հետ քաղքին սինդիկոսն 'ի յոյց իւր մօտիմ բարեկամութեան Ստնց ընթացակից եղան զինուորականաց մեծք, յորս յիշելու ենք Քոզէնց և Բիւնէլ զօրացեալները: Քաղքին ծիրանաւոր պատրիարքն իսկ վսեմ. Գ. Ալիսողիկ 'ի իր անթիւ գրաւորքով թողլով ուզեց անձամբ գալ մեզ վատելոցս 'ի քաջակերութիւն, որոյ օրինակին հետեւեցան և այլ բազում եկեղեցական խխանաւորք, և հուսկ ուրեմն իննսնամեայ ազնուատեմ և մարդկութեան բարերար Քանաւ Աբրաքն: Ի հիւստոսաց յիշելու ենք նախ մեր Սամանեան հիւստան, Քաղիկոյ և Ալստիկոյ հիւստան, որ անձամբ աւերակաց վրայէն քայելով ուզեց հաւատել զիպարմ աւերումը: Իսկ յիշխանաւոր արքայազարմ ստարաց 'ի քաղաք բնակելոյ՝ յիշելու ենք Տօն Կարլոս Սպանիոյ Թագապահանքին զայլատուր, որ 'ի մանկութենէն

անտի սէր ու մօտեմութիւն ցուցած է Ռիստիս: Այլ և քաղաքացւոց ազնուականք իսկ իրենց քաջակերի միսիթարութիւնը չզրացան մեզմէ. յորս խառնեցան նաեւ օտարազգի քաղաքս, բնակք, զլիսաւորապէս անգղիացի, ամերիկացի և տաւրիացի: Ինչպէս նաեւ Ռապիւն կամիւն, իտալական դեսպանին 'ի վիեննա, ողջն ընտանիքն քաղաք գտնուելով՝ անձամբ եկին մեզ յայց: Այս ամենուն ծայնակից եղան լըբաղիլք թղթակիցք, որք կը ներկայանային մենաստանիս դուռը, խնդրելով ներումն և ընդունելութիւն՝ անձամբ հաւատուելու եղածն, և իրենց ընթերցողաց հաղորդելու: Այս թղթակցաց զրութիւններէն յառաջ եկան այն լի գովեստիք գրուածք, որ մինչդեռ ցաւակցելով ձախորդութեան տխուր զէպքերը կը պատմէին, մենաստանիս պատմութիւնն իտալական լրագրաց մէջ յարգութեամբ կը հրատարակէին: Եւ ասոնց արձագանգն կը տարածուէր յԱւստրիա, 'ի Վաղիա, յԱնգղիա և յԱմերիկա. և այսպէս մեր քաղաքի բարեկամաց ծանօթութեանը կը հասնէր եղածն, յորոց և ցաւակցութեան թուղթք և հեռագիրք սկսան յանախել վանացս դուռը:

Հուսկ ուրեմն յիշելու ենք յարգանք ու երախտագիտութեամբ նաեւ իտալիոյ օգոստափառ Թագուհին, որ իւր մարդասիրական ազնուախոհութիւն սեղից տալով՝ ուզեց մեր թշուառութեան միսիթարակից ըլլալ: Հստ իւր տարեկան սովորութեան՝ իւր գայլուտն ազգելով կանխաւ մեր վանաց դուռը, օգոստոսի 10ին առաւօտեան Պատարագի խորհրդոյն ներկայանալէն յետոյ, ելաւ քաղմեցաւ 'ի Գրատոս, և գրեալ թէ ժամով ողջն ամերմարքա խօսակցելով առանձին առանձին ամենուն հետ, ուզեց տեսնել նաեւ տպագրատան արդիւնքը, խրախուսելով զամէնը արիւնաշու ու գործելու: Եւ ապա մինչ մեկնելու կ'ըլլար, յառաւել միսիթարութիւն մեզ հետեւել իմաստը կը գրէր բուն իւր ձեռամբ, ու մշտնջենաւ որ յիշատակ իր թողուր իւր մարդասիրութեան՝ մեզ և մեր ապագայից: Գրուածքն այսպէս կը հնէ.

Աստուած՝ որ միշտ պաշտպան է մտալուստութեան հետ լծորդ եղբայրսիրութեան ոգւոյն, պաշտպանեց զհայազգի Հարս՝ այս յետին ցաւակից արկածին մէջ։ Երախտապարտ են Աստուծոյ այն ամէնքը՝ որ համարիտ բարեկամ են այս բարեպաշտական ընկերութեան, յորս առաջին կը ստորագրէ ինքզինքը

ՄԱՐԴԱՐԻՏԱ

Ը

Հոս մտանալու չեմ յիշելու մասնաւորապէս անգղիացի բարեկամի մը խորխորախ խօսքը զոր մատոյց ինձ իւր այցելութեան առթիւ։ Հետ մտորներէ ՚ի վեր իւր ստուժական քննութեանցը պատճառաւ քաղաքս բնակելով, հազիւ թէ ձախորդ լուր լսեց՝ փութաց մենաստաւ նիս գուռը։ Այն ահաւոր հարուածին առջին ապշած՝ իւր մարդասիրական թափին տեղիք տալով,

— Այս անակոնունիի հարուածին դարմանը մարդասիրական բարեբար ձեռնտութիւնն ընելու է, ըսաւ։ Հարկ է ձեզ առհասարակ աւանտն բարեբարութեանը դիմել։ Ախարհածանօթ է ձեր անունն, և ձեր հաղաբարսը այցելութեան նուէրը պիտի զըլանան։ որովհետեւ ձեր աղէտն յանաշտգէմ քաղաքականութեան խնդիր է։ Անշուշտ նախ ձեր ազգայինը, որոց գործունեայ ներկայացուցիչք էք եւրոպական քաղաքակրթութեան առջին, և որոց կ'ընայ առաջին պարտքն, զձեզ պիտոր շմուսանան։ Բայց վիճ և նոյն առնես իմաստութեամբ կը գործէք։ Եթէ մեր Անգղիական ազգին բարեկամական ձեռնտութեանը դիմէք։ —

Այս ազնիւ յորդորին առջին առ վայր մը մը տախտիւր կեցայ, և ապա պատասխանեցի իրեն։

— Տարակոյս չկայ՝ որ այն հազարաւոր Անգղիացիք, որ տարուէ տարի յայց կու գան մենաւ ստանիս, մեծ համարման ու համակրութեան հաւաստիք կու տան մեզի։ Թէպէտ և դէպքս արտաքոյ կարգի է և դառն, բայց չեմ յուսար թէ յաջող հետեւանք ունենայ՝ ընդհանուր անգղիական ազգին ձեռնտութեան աղբիւր մատուցանելն։ Վասն զի կաթողիկէ կրօնից դաւանութիւնն մեծ խոչ է յայլակրօնից օգնութիւն գտնելու։ —

Այս խօսքին վրայ բարեկամիս դէմքն առ վայր մը նսեմացաւ, և սակաւ մի զգածեալ՝ խօսքս կտրեց, այսպէս։

— Կ'անիրաւիս այդպէս խօսելով, և իմ ազգիս ոգւոյն ու յառաջդէմ կրթութեանն նախատիւնը կը դնես, թէպէտ և գիտեմ որ անխարդախ սրտիւ կը խօսիս։ Այս ըսեմ քեզի,

որ մարդկային կենսոց մէջ թշուառութեան առջին նախնայն կիրք, ամենայն ստեղծութիւն, ամենայն կարծիք կամ համոզումն, ինչ և իցէ աղբերէ յառաջ գոյ՝ կը լռէ, և միայն մարդասիրութեան գուրդն կը խօսի։ Հետ սոցէտ, շատ անգգայ ու բիրտ ըլլալու է այն անձն՝ որ մոլեռանգանէ շարժեալ կրօնական համոզումը պատճառ թռնէ թշուառացելոյ մը բարեբար ձեռք մը շերկեցընելու։ Անգղիացին որչափ ալ իւր կրօնական համոզմանը վրայ յամառ ըլլայ ու կաթողիկոսութեան հակառակորդ, գիտէ միշտ զանազանէ կրօնը մարդասիրութեան պարտքէն։ Չեմք այն նախնի անկրթութեան դարերը և ոչ այն բարբարոս ժողովրդոց մէջ, ուր բուն մոլեռանգութիւնն ոչ միայն անկրթութեամբ, այլ և սրայ կատաղութեամբ կը վարուէ։ Կարծեմ շատ իսկ հաւատարմեք ունի ձեր ընկերութիւնն հասկընալով թէ ինչպէս արգոյ ու պատուական կը համարի զձեզ նորաբանդ անգղիացին։ Այն բազմաթիւ ճանապարհորդք որ աւուր ի մայրենի ձեր հոչակաւոր վանքաց, զձեզ կը նկատեն իբրեւ հնարան սոցի մը ազնուագոյն ծնունդք, որ իբր արդիւնաբար մեղուք մի միայն նպատակ ձեր ազգային բարիքը կը մտածէ։ Սոյոգ կ'ըսեմ որ ձեր ազգասէր և անշահասէր անձնանախորմը տեսնելով միշտ զարմանք ու պատիականք զգացած եմ։ Վասն զի ամենազգուարին և գերագոյն ու շատ վսեմ բան կը համարիմ՝ որ մէկն իւր հայրենիքը թողու, իւր ընտանիքէն բաժնուի, ուրանայ իւր ազատութիւնը և ամենայն աշխարհային ազնիւ բաղձանք, և գոյ այս սահմանափակ փոքր կըղզեկիս մէջ ամբողջ միայն ՚ի սէր հայրենեաց, որոյ բարօրութեան համար հանապաղ աշխատի։ Եթէ անհատ ո՛ր ըլլայիք՝ անշուշտ աշխարհիս ուշագրութիւնը չէիք դրուեր։ Վասն զի եթէ անհատն այսօր է ու կը փայլի, վաղը կ'անցնի և անունն իսկ մոռացութեան մէջ կը նըսեմանայ։ սակայն ընկերութիւն մը կը յարատեւէ, և իւր մատուցանելի ծառայութիւնն չի ապառիւ։ Հնար է թէ առ վայր մը նսեմանայ, բայց ամէն ատեն ընդունակ է իւր ծոցէն այնպիսի անհատներ տալու՝ որ ո՛ր իցէ սոցի առջին պարծանք ըլլան։ Յորակը կը տէ՛ ընկերութեան մը ձեզիման, ազգ միջխառնմիջ կրնայ ականկալել։ անոր համար ալ ձեր ազգայինը անշուշտ զձեզ պիտի քաջալերեն և ձեր գոյութեան պատրոյցը վառ պահեն։ Ահա ինչպէս կը նկատու զձեզ Անգղիացի մը, որ կրօնական համոզմանք ձեզմէ կը տարբերի։ այլ կրօնական համոզմանն առտուածային դատաստանին կը վերաբերի, որոյ արդարութեան դէմ միշտ կ'անիրաւի մոլեռանգութիւնն։ Ընկերութենէ մը միայն յառաջդիմութիւնն օգտակար ծառայութիւն պատշաճնելու է այն ազգն՝ որ իւր պատիւը և օգուտը կը ճանչնայ։ Ուստի դարձեալ խորհուրդս

կը կրկնեմ. դիմեցէք մեր անդդիական ազգին, և հաւաստիք կ'ունենաք անոր ձեր վրայ ունեցած համարմանն: —

Ոչի ուշով մտիկ կ'ընէի այս խօսակցութեանս առանց ընդհատելու, բայց մի և նոյն առանձն մտաք կ'ըսէի, թէ քանիք արդեօք կը գըտնուին որ այսպէս վսեմ և ազնիւ սիրտ ունենան, և ամենայն նախապաշարմունքէ ազատ ըլլան. քանիք արդեօք կրնան զանազանութիւն զնել ընդ քաղաքական յառաջագիմութիւն և ընդ կրօնս...: Բայց և այնպէս հարկ էր հետեւել բաւականական խորհրդին:

Թ

Գեռ ևս կը ծխային մեր պարկեշտ մենաստանին աւերակներն, երբ մենք 'ի թանաղատութենէ օտարեալ' նստալք խորհելու: Ինչ լըքման վայրկեանս. միանձանց շատք յանուակալս ըմբռնեալք և կամ պատականառողներն ազատելու գրադեալք՝ իրենց օճեանակներն ամենայն բովանդակածով կորուսած էին: Մենաստանն գրեթէ կիսով չսփ հրդեհեալ. աչա կերտաց ննջարանն կիսով չսփ՝ հանդերձ կահիք՝ ջնջեալ, մինչև թանաղատել զմեզ առ ժաւմանակ մի յապահովել զաշակերտս 'ի զիւր: Սրահք և հասարակաց տեղիք՝ ապականեալ կահիք և աւերածով լցեալ. վնաս մեծ և անպատմելի, որում դարման տանելն 'ի վերէր քան զմեր կարողութիւն: Ուր փայլէր շնորհք, մաքրութիւն ու կարգ, հիմա ուրիշ բան չէր տեսնուեր, եթէ ոչ ապականութիւն, աղտոնութիւն և աւեր: Ոչ երբեք մտքս կ'իյլէ այն նսեմութիւնն՝ որ ամենուս երեսը կը սեւեմուէր. միայն աստուածային կամաց համակերպութիւնն մեր լքեալ սիրտը կը խրախուսէր: Հարկ 'ի վերայ կար դարման գտնել այն անգութ հարուածին. մեր առաջին յոյսն, մեր առաջին մտածութիւնն՝ առ մեր սիրելի ազգակիցս զիմեն: Քաղցր է մեզ յայտնել այսօր մեր շնորհակալքն առ այն 'ի բարեսէր մերազնայց, որոց բարեկամութեան ցոյցք անմշկելի են մեր սրտէն, և որք ձախորդ լուրէն շարժեալ՝ փութացին միմիմաբական թիթովք և դրամական օգնութեամբ զմեզ քալելոյն: Որոց անուններն առանձին առանձին հրատարակելն երկայն ըլլալով խնդրեմք ընդունել սիրով մեր այս հրապարակական ցոյցը:

Եղան և որ իրենց ցաւակցութեան հաւատիքը փութացին տալ մեզ զգածեալ գրովք. որոց անուանքը հարկ կը համարվիք հրատարակել՝ իբրև 'ի զոյգն փոխարէն իրենց ազնւութեանն: Եւ նախ զնելու եմք եկեղեցականաց դասէն զվսեմամբառ Միրանուհի Հասուն 'ի Հռովմայ, զՄխիթարեան Հարս 'ի Վիեննայէ

և 'ի Թրիեստէ, և զՏէր Մեսրոպ Ուղտուրեան 'ի Լիւբուռնոյէ, զՍարգիս քահանայ Պողոսեան 'ի Ռամնալ, և զՊօղոս քահանայ Յակովբեան 'ի Պօթուրանայ:

Յալիսականաց կարգէ յիշելու ենք զՊ. Կար. Էղեանց 'ի ռուսաբնակ Հայոց, որոյ բարեկամութեան ցոյցք անպակաս են յՌիստիս, ըզգրիգոր Խալաթեանց 'ի Մոսկուայ, որոյ առնիւ և զգածեալ գիրը բաղձալի էր ինձ հրատարակել՝ եթէ տեղիս ներէր. զՊ. Յակոբ Տամատ և Պ. Յովսէփ Խսկէնտէր 'ի Վաղդիոյ, և զՊ. Մ. Թօթվանեան 'ի Բարիլէ. ապա զԹագաւոր Փարսն, զԺիր և զգործունեաց ազգասէն 'ի Հայոց Աղեքսանդրիոյ, որոյ բարեսէր գիրն միշտատեւ յիշատակ պիտու մնայ Ռիստիս դիւանը: Ընդ նմին և զՌէիզեան եղբար և անոնց ազգաստէն, որոց անկեղծ բարեկամութիւնն և վաղեմի աշակերտութիւնն զիրենք Ռիստիս որդիս համարել կու տայ, ըստ իրենց ազնիւ յայտարարութեան՝ 'ի մեկնել իրենց զգացած ցաւը վանացս աղէտը լսելով: Չամէնանք 'ի Պոլսոյ ոչ յետնորդ մնացին փութալու մեզ 'ի միմիմարութիւն, հաւատարիմ կ'ալով իրենց գերազանցանքն հնաւանդ բարեկամութեանն առ Միաբանութիւնս Յիւնիք, 'ի մէջ այլոց, և զՊ. Մխիթար Մաղիկեան 'ի Լիւբուռնոյէ. և զՊ. Աշատէր Պայրսեան 'ի Տրապիզոնէ, զՊ. Անդրէաս Պինտոն 'ի Չմիւռնիոյ, և զՊ. Գէորգ Զօհրապեան 'ի Լիւննէ, իբրեւ խելին ազակերտք:

Այս ամենուն ազնիւ սրտին բոլոր գոհութիւնն է մէն՝ Եւսեւ. անոնց որ արգահատութիւննին ու հին բարեկամութիւննին այս սրտակեղ պատահարին առթիւ յայտնել են զբոլ կամ 'ի բերանայ առ մի որ կամ առ ոման 'ի մերոցն միաբանից, առաջելով հաղորդել զայնս պաշտօնապէս առ կեզրոն Միաբանութեանս: Որոց համարն արգարեւ բազում է:

Յիշելու ենք նաև մեծ երախտագիտութեամբ զնոսա, որ հրատարակեալ յօդուածներով՝ փութացին 'ի նպաստ դալ Ռիստիս. ինչպէս Մշակին խմբագիրը, և զԽաւորապէս Պ. Պետրոս Բէպուրեանց, որոյ յօդուածն կ'ապացուցանէ զորդին բարի սիրտը, ազնիւ կրթութիւնն ու մեծաննութիւնը: Այսպիսի արարատէր անձինք ո՛ր և ինչ ազգի պարծանք են, որ իրենց կրթութեամբ և վեհանձն ոգւովն կ'ապացուցանեն թէ յառաջագիմութեան արժանաւոր զաւակունք են, պատա 'ի նախապաշարմանց:

Ժ

Ազգայինք այսպէս իսկ յօտարաց, Թողով այն Թուղթքն որ հասին առ մեզ 'ի Վաղդիոյ, Սեւստրիոյ, 'ի Գերմանիոյ, յողջն խալիոյ և

յԱմերիկոյ, Հանդերձ դրամական նուէրներով ինչ, յիշելու ենք մասնաւորապէս չնորհակալու արտի մեծ Համակրութեան ցոյցն՝ զոր ետուն մեզ Անգղիացիք:

Եւ նախ մեր վաղեմի բարեկամն Պրայս, որ աղէտը լսածին պէս՝ փութաց զիր գրելու ցաւակցութեան և ոչ միայն ինքն, այլ և իւր ազնիւ եղբայրն, որ և միտքան թոյլտուութիւն խնդրեցին՝ յանուն Ռիտտի դրամական Հանգաւանակութիւն ընել 'ի դիւրութիւն մեզ: Եւ նոյն իրենց այս առաջարկն թէ՛ լրագրաց մէջ հրատարակեցին և թէ՛ անձամբ գործադրեցին, իրենց ազգայնոց նուէրը մեզ 'ի նպաստ աղերսելով: Մեր երախտագիտութիւնը մշտաւն պիտի ըլլայ առ Պրայս ազնիւ եղբարս, որ ամէն առթի մեզ զանց չըրին երբեք յայտնի ընելու իրենց առ Պրայս ունեցած Համակրութիւնը:

Գարծեալ յիշելու ենք զՃօն Ռուքլին, այն մեծասիրտ ու հոգեւոր գրագէտը, որոյ անունը ամէն անգործացի պատկառանքի արտաբերէ՝ իրը պարծանք իրենց ազգին, և որոյ շատ յիշատակէ կը պահուին վանացս գրատունը: Աղիտիս լուրը լսելով ոչ միայն իւր նուէրը ուղարկեց, այլ և ազնիւ և մեծանձն նամակաւ փութաց զմեզ քաջալերելու, հրաւիրելով միանգամայն երթալ յԱնգղիա, և հոն լանքէ սորանգործ լինի վրայ մենաստան կանգնել: Ռոքլէտեալ ինքն անդորրութիւն ու խաղաղ կեանք սիրելով՝ կը համարի թէ՛ շրգենաւուց արդի յամախոթութիւնն և աշմուկն 'ի Վենետիկ, ոչ միայն նոյն մեծագործ քաղաքին խաչելութիւնը իրոնցքնել տըլին, այլ և մեր խաղաղամիտ ընկերութեան ու զնոյն խռովքն են:

Իսկ Սըր Լէյարտ, երբեմն դեսպան Անգղիոյ 'ի Առտանդնուպոլիս, որ քաղաքս կը բնակի իւր յատուկ պալատան մէջ, ոչ միայն անձամբ մենաստանիս դուռը եկաւ այս առթիւ իւր ցաւակցութիւնը մատուցանելու, այլ և իւր նուէրը շնորհեց յօգնութիւն շինուածոյն: Թողունք նշանակել և զայլ նշանաւոր անձինս, որ վերակից եղան մեզ, Գտնուեցան և

ոմանք որ երկիւղածութեամբ ներումն կը խնդրէին ըսելով. « Զեմ հարուստ. բայց չկարենալով այս ցաւալի առթիս մէջ զլանալ իմ փոքր նուէրս՝ կը խնդրեմ ներել և ընդունիլ որչափ և փոքր ըլլայ. փափաքելով փոքու իւր մասնակցի ըլլալ 'ի վերականգնումն ձեր սիրուն մենաստանին, որոյ յիշատակը միշտ սրտիս մէջ կը կրեն »:

Այս ամենուն նամականին իբր յիշատակ կը պահուի արդ 'ի դիւանի, յերախտագիտութիւն մերոց յաջորդաց, և 'ի հաւաստիս անգղիական ազգին առ Միսիթարեան Հարս ունեցած սիրոյն ու համարմանն: Նմանապէս կը պահուին նաև այն բազմաթիւ լրագիրք՝ որ այս առթիւ Միսիթարայ տան վրայ խօսեցան, և գլխաւորապէս խաղական, անգղիական և ամերիկեան լրագիրք, որ այս ցաւալի լուրն ամէն կողմ տարածեցին:

Սակայն հարկ է 'ի մասնաւորի և դրուստեօք յիշատակել նաև զոմանս յԱմերիկացի բարեկամաց մերոց, որք ծանօթանալով ձախորդ լըլոյն, չկամեցան յետնորդ ըլլալ քան զՊրայս ազնիւ եղբարս. այլ փոյթ ըրին մասնաւորով կազմել և հրատարակեալ յօգուածիւ խրախուսել իրենց հայրենակցաց նուէրն 'ի նպաստ Միսիթարեան Հարց. իրենցքնելով հազարաւորաց այցելութիւնն 'ի դրուստ Ս. Ղազարու, և իրենց եղած մարդասէր հիւրընկալութիւնը: Սոցա գլխաւորն է Հանլէյ՝ ազնիւ ու քաջ մասնակցին, որ գոցեց քանն ումօք յառաջ ամերիկեան վիպատ էր 'ի Վենետիկ, և ոյծմ իւր գրաւոր փաստակով անունն անմահացեցած է, և վանացս համբան իւր բազմաթիւ գրութիւններով առ հասարակ Ամերիկացոց սիրելի ու պատկառելի ըրած է:

Առնոց ամենն և նմանեաց, որպէս և Անգղիոյ խորհրդարանին երեսփոխանաց ոմանց մեծանունութեան և առատաձեռնութեան՝ Միսիթարեան Ռիտտն ինքզինքը երախտապարս միշտ պիտի համարի:

Հ. Յ. Վ. ԻՍԱԿԵՐՏՆԵՐ:

Նոր գտնուած հռոյմեական ննուրիներ. — Վերջիս յԱնգղիա՝ Մարտիտուկի մօտեւն, գործաւորք տան մը հիւր զննելու առթիս՝ հնդգիպեցան երկու մարդկային գիտկանց, և՛ անոնցմէ քիչ հեռու փոսի մը մէջ հին դրամոց, յորոց մասնք արծաթեայ էին, 12 մետաղական սնակայ և սափորի մը: Պնակներէն ոմանք փորագրուած են դեղեցիկ զարդերով և պատկերներով՝ ըստ հռոյմէական ոճոյ: Մետաղէն յորմէ կազմեալ են սնակներն՝ արծաթի նմանութիւն ունի, և անոցի տեսակ մի կը թուի: